ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 3-Ա

<< 13 >> հունվարի 2017 թվական գյուղ Փանիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 20-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին>> թիվ 14-Ն որոշման հավելվածի 4-րդ գլխի 17-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարին կից ձևավորվող թվով երեք խորհրդակցական մարմինների կազմում ընդգրկել ավագանու անդամներ.

1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամներ՝ Վահան Նազարյանին, Գուրգեն Արևիկյանին և Դավիթ Մանասյանին:

2. Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսական, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամներ՝ Միհրան Բոյաջյանին, Համազասպ Սալնազարյանին և Մանվել Սալնազարյանին:

3. Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու անդամներ՝ Ամբակում Սերոբյանին, Հովհաննես Մարկոսյանին և Արմեն Արևիկյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Արմեն Արևիկյան՝ կողմ .....
Գուրգեն Արևիկյան կողմ .....
Միհրան Բոյաջյան՝ կողմ .....
Դավիթ Մանասյան՝ կողմ .....
Վահան Նազարյան՝ կողմ .....

Մանվել Սալնազարյան՝ կողմ .....

Ամբակում Սերոբյան՝ կողմ .....

Համազասպ Սալնազարյան՝ կողմ .....

ՓՅՈՒՆԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԱԿԵՅԱՆ

13.01.2017 թ
Գյուղ Փանիկ